Միջազ



Բարով եկար, սիրո՛ւն կռունկ,
Ի՞նչ լուր բերիր հայրենիքես,
Խոսի՛ր ինձ հետ ազատորեն,
Կյանքս կնվիրեմ ես քեզ:

Տեսա՞ր իմ հայրենյաց տունը,
Գեղեցիկ զարդարված բույնը,
Նորա սիրուն տանջված եմ ես,
Աչքերիցս կորավ քունը:

Ազատ տեսա՞ր մեր լեռները,
Հաղորդեցի՞ր դու իմ սերը,
Այն լեռներու պաշտպանողը,
Արծվի, կորյունի նետերը:

Տեսա՞ր՝ մեր փոքրիկ բուրաստան,
Վարդ, մեխակ, շուշաններ շատ կան,
Եդեմական դրախտավայր՝
Նա կոչվում է մայր Հայաստան:

Այնտեղ ունիս եղբայր ու քույր,
Միջազ, ի՞նչ կսպասես իզուր,
Արի՛, առնեմ իմ թևերուն,
Գնանք այնտեղ, ուրախացուր:

Bookmark



Ես մի ծառ եմ ծիրանի,
Հին արմատ եմ անվանի,
Պտուղներս քաղցրահամ,
Բոլոր մարդկանց պիտանի:

Հին ծառ եմ արևելյան,
Չունիմ որոշ այգեպան,
Տունկերս ամեն երկիր
Ընկած են բաժան-բաժան:

Ապրում եմ խեղճ, միայնակ,
Որոշ ծառի շքի տակ,
Հյութս որդունքն է ծծում
Իմ տունկերուս փոխանակ:

Տունկերս ուր էլ որ գնան,
Թեպետ նույնը կմնան,
Բայց օտար հողի վրա
Չեն աճիլ, կչորանան:

Արևելքում ինձ տնկեց,
Երբ որ տերը ստեղծեց.
Ասավ՝ աճե՛, բազմացի՛ր,
Մի այգի էլ ինձ տվեց:

Ուղարկեց մի այգեպան՝
Հարավից հսկա իշխան,
Այն հսկայի անունով
Կոչվեցա ծառ հայկական:

Չորս հազար տարվա ծառ եմ,
Մարմինս պինդ, կայտառ եմ.
Թեև ուժս պակաս է,
Բայց անունով պայծառ եմ:



Պարտեզում վարդեր բացված՝
Կսպասեն սոխակի,
Առանց սոխակ թառամած,
Կարոտ են պսակի:

Արդյոք ո՞վ է՝ դուռն է թակում,
Ա՜խ, սիրտս կդողա,
Սիրուհիս ո՞ւր է գնում,
Ա՜խ, սիրտս կխաղա:

Գետակի ալիքները
Գնում են խայտալով,
Սիրահարի աչերից
Արտասուք թափելով:

Արդյոք ո՞վ է՝ դուռն է թակում...

Սիրուհին տանը նստած՝
Սպասում է յարին,
Քնարը ձեռքին բռնած՝
Նվագում յալագին:

Արդյոք ո՞վ է՝ դուռն է թակում...

Թիթեռը ճրագի մոտ
Շրջում է անդադար,
Մինչ իր վերջ սիրակարոտ
Չունի նա օր, դադար:

Արդյոք ո՞վ է՝ դուռն է թակում...

Սիրուհին տանը նստած՝
Գրում է նամակներ,
Խիստ տրտում կանցկացնե
Իր գեղեցիկ օրեր:

Արդյոք ո՞վ է՝ դուռն է թակում...

Bookmark



Սիրուննե՛ր, մի՛ք նեղենա,
Որ միշտ իմ յարիս եմ գովում,
Դուք իմ դարդս չեք իմանա,
Էնտի յարիս եմ գովում,
Էնտի փերուս եմ գովում:

Թեկուզ լինիք աղավնյակ՝
Թևիկներդ լայն բաց արած,
Ճախրելով վեր բարձրանաք,
Էլի յարիս եմ գովում,
Էլի փերուս եմ գովում:

Որքան կուզեք, զարդարվեք
Ալ ու եշիլ գոհարներով,
Յարս՝ սև, դուք՝ ա՛լ հագեք,
Էլի յարիս եմ գովում,
Էլի փերուս եմ գովում:

Թեկուզ լինեք սիրամարգ՝
Ձեր նախշունիկ փետուրներով,
Կամ անուշ երգող սոխակ,
Էլի յարիս եմ գովում,
Էլի փերուս եմ գովում:

Մազերդ՝ ոսկե թելեր,
Ունքերդ՝ նորածին լուսին,
Աչքերդ՝ փայլուն աստղեր,
Էլի յարիս եմ գովում,
Էլի փերուս եմ գովում:

Ամենքդ մեկ-մեկ փերի,
Աչքիս առաջ ման եք գալի,
Բայց ինձ չեք կարող գերի,
Էնտի յարիս եմ գովում,
Էնտի փերուս եմ գովում:



Մեկ սի՛րտ էրա, հե՛յ անջիգյար,
Արի՛ մեր տուն, նե՛րս մտի,
Ես հիվանդ եմ, յա՛ր, քո դարդով,
Էդ քո սիրով ճա՛ր գտի:

Վարդ ցանեցի՝
Դարդ քաղեցի,
Յար փնտրեցի՝
Յարա գտա:

Աչքս մնաց, ա՜խ, քո ճամփեդ,
Հեչ չէ, արի՜ երազով,
Մեկ էլ տեսնիմ շղվա բոյդ,
Չեղնի՝ մեռնիմ մուրազով:

Վարդ ցանեցի...

Թե սարեր կան ճամփուդ վրա,
Թև՛ առ, թռի՛, անցկացի՛,
Թե չարեր կան սրտիդ վրա,
Դո՛ւրս վռնդե, շուտ հասի՛:

Վարդ ցանեցի...

Տարիներս գլոր-մլոր,
Ա՜խ, շուտ անցան, գնացին,
Իմ սավդալու սրտիս բոլոր
Քու դարդերդ մնացին:

Վարդ ցանեցի...

Bookmark